

ԽՕՁԱՅ ՍԱՐՖՐԱՉ ԿԱՄ ՇԱՖՌԱՉ

Նշանաւոր Խօջայ Նաղարի այս մեծանունն որդին, ըստ մեզի տրուած տապանադրին, մեռած ըլլալու է 1676-ին, 55 տարեկան, ուրեմն, ծնած՝ 1621-ին: Սակայն, Ի՞նչպէս հաշտեցնել ասիկա Դաւրիթեցւոյ վկայութեան թէ՛ «Խօջայ Նաղարն զրեաց ի վերայ որդւոյ իւրոյ Խօջայ Սարֆրազին, որ յաւուրս յայնոսիկ էր յաշխարհն Ատրպատականի, մեծաբել զվարդապետն Մովսէս յԱսպահան»: (43):

Հ. Ակինեան այս դէպքերուն համար կը նշանակէ 1624 թուականը: Արդ՝ 1621-ին ծնած Սարֆրազ 1624-ին միայն երեք տարեկան պիտի ըլլար եւ բնական է, որ անկարող էր կատարել ինչ որ իր հայրը իրեն կը թելադրէր:

Ես կը խորհիմ թէ՛ Տէր Յովհաննեանց արդէն մասամբ եղծուած Սարֆրազի տապանադրին թուականը սխալ կարդացած է: Մահուան թուականը, փոխանակ ՌՃԻԵ կարդալու, պէտք է կարդալ ՌՃԵ: Այն ատեն կ'ունենանք 1656 իրր մահուան թուական եւ իրր ծննդեան թուական 1601, որ ինծի յարմարագոյն կ'երեւայ:

Նոր Զուղայի թիւ 406 Յայսմաուրբին համաձայն, որ գրուած է Սպահան Տէր Բարսեղէ 1627-ին. Խօջայ Գրիգորի համար, մենք արդէն Խօջայ Սարֆրազը ամուսնացած եւ ազնիւ-զաւակի մը տէր կը գտնանք: Ահա թէ ձեռագրին ստացող Խօջայ Գրիգոր Ի՞նչ կը գրէ իր յիշատակարանին մէջ. «... Միւս գտներն. Աւդիտին. եւ կողակցին Պրն. Սարֆրազին. եւ գտներն Խաթունջանին...»

Ահա կարեւոր վկայութիւն մը եւս, որ կը

թիւններէ: Ասոնցմէ հատ մը ունի 1551 թուականը, ուրիշ մը՝ 1603, հատ մը՝ 1606, չորրորդ խաչքար մըն ալ՝ 1611: Պէտք չէ մոռնալ, որ ասոնց նման փոքր խաչքարերու փոխադրութիւնը սովորական երեւոյթ մըն էր, եւ 1551-էն խաչքար մը այս եկեղեցւոյն մէջ չի նշանակեր եկեղեցւոյն իսկ այդ թուականէն ըլլալը:

(43) «Պատ. Դաւրիթեցւոյ», էջ 297:

հաստատէ մեր վերի սրբագրութիւնը: Խօջայ Սարֆրազի կողակիցը՝ Աւդտէն ուրիշ տեղ մըն ալ մեզի կը ներկայացուի իրր Յուդիդէ: Այս մասին իր կարգին:

Սարֆրազի կեանքն ու գործունէութիւնը իր մեծանունն հօր եւ հօրեղորօր արեւին տակ բնական է, որ շատ յստակ չըլլայ:

Մինչ Թովմաս Հէրպէրդ կը խօսի Խօջայ Նաղարի մասին, նոյն դեպքանութեան ուրիշ մէկ անդամը իր գրած յուշերուն մէջ կը յիշէ Խօջայ Նաղարի որդի Սարֆրազը: Օտար արդի գրողներ չփոթութիւն մը ուղած են տեսնել հոս, մինչ իրականին մէջ պարզ է ու յստակ: Անգլիական դեպքանութեան աւելի ականաւոր անդամները կը հիւրասիրուէին Խօջայ Նաղար հօրմէ, երկրորդական անդամները կը մեծաբուէին Խօջայ Սարֆրազ որդիէն:

Ռապրդ Սթոտարտ, որ ուղեկից էր Հէրպէրդի նոյն այդ Անգլիական դեպքանութեան մէջ, թողուցած է շահեկան օրագիր մը, ուր մեզ համար կան հետաքրքրական տեղեկութիւններ:

1628 Սեպտեմբեր 20-ին դիմաց ան կը գրէ.

«Կիրակի ըլլալով ես եւ իմ ընկերներէս երկուքը դացինք (Նոր) Զուղայ՝ արարողութիւնները տեսնելու համար: Երբ եկեղեցին հասանք, ես նկատեցի, որ Պապականէրէն շատ չեն տարբերի իրենց ծէսերուն եւ տարադիւրուն մէջ... Այս առթիւ մկրտուելու մանկիկ մը կար, որ գաւալին էր Հայ Իշխանին: Այն ատեն եպիսկոպոսը մարդ մը զրկեց մեզի, որ քիչ մը փորթուկալերէն կը խօսէր, մեզմէ խնդրելու, որ հաճինք ներողամիտ ըլլալ եւ եկեղեցիէն դուրս նստինք, մինչ մկրտութիւնը կ'աւարտէր: Այնպէս որ անոնց (Հայոց) մը կրրտութեան մասին չեմ կրնար տեղեկագրել: Սակայն, երբ արարողութիւնը աւարտեցաւ, մանկիկը դրուեցաւ երիտասարդ պատանեկի մը թեւերուն վրայ, իւրաքանչիւր ձեռքին մէջ վառուած մոմ մը բռնուած, եկեղեցիէն մինչեւ տուն համրու ընթացին: Անոր մարմինը պարուրուած էր ճոխ դիպակներով ոսկիէ եւ ուրիշ հարուստ նիւթերէ: Իրմէ առաջ կը քալէր քահանայ մը արծաթաթեւ շուրջառով մը կռնակին վրայ խաչով մը, եւ ուրիշ (քահա-